



## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (Մարտիկի տեղեկատու)

Շատ պետություններում և երկրներում կան տարածքային պաշտպանության հատուկ զորքեր, որոնք, որպես կանոն, ծավալվում են միայն պատերազմի ժամանակ, իսկ խաղաղ ժամանակ հանդիսանալով որպես աշխարհագոր, ժամանակ առ ժամանակ անցկացնում են հավաքներ և մարզումներ:

Սույն Տեղեկատուն կազմված է գիտաճանաչողական և տեղեկատվական նպատակներով, դրա դրույթներն ուսուցման համար չպետք է կիրառարվեն առանց ըմբռման և մեկնաբանման: Գրվածին քննադատաբար վերաբերվեք: Կասկածների դեպքում համապատասխան հարցերով դիմեք մասնագետներին:

## ՆԱԽԱԲԱՆ

Ջորքերի ցանկացած ծավալման դեպքում առաջին 100 օրն առավել վտանգավոր է, քանի որ անձնակազմը չնչին պատկերացում ունի շրջակա միջավայրի մասին (տեղակայման շրջան, պատասխանատվության գոտի): Թշնամին այս փուլը գնահատելու է որպես ստորաբաժանման առավել խոցելի պահ և առավել հավանական է, որ նա կօգտվի այս իրավիճակից:

### Խորհուրդներ

- Միշտապես կատարեք հրամանները ամբողջ ծավալով:
- Ընդօրինակեք փորձը, սովորեք նախկին հերթափոխի անձնակազմից և փորձառու զինվորներից:
- Հակառակորդի կրակի և դիտարկման համար կողմնորոշիչ չհանդիսանալու նպատակով ամեն օր փոխեք շրջակա միջավայրի պայմանները (նշաններ, ցուցանակներ, վայրեր և այլն):
- Հակառակորդը մարտավարությունը հարմարեցնելու է ըստ ձեր փոփոխությունների (սա կօգնի ձեզ կանխատեսել ապագա փոփոխությունները):
- Հավատացեք ինքներդ ձեզ, ձեր պատրաստվածությանը որպես զինվորի, վստահեք ձեր հրամանատարներին, ձեր զինակիցներին, ինչպես նաև ձեր սպառազինությանն ու հանդերձանքին, նույնիսկ հակառակորդի հետ մարտից հետո:
- Մի եղեք չափից ավելի ինքնավստահ: Չգործեք սովորական, համակարգված սկզբունքով, որը հեշտությամբ կկանխագուշակի հակառակորդը:
- Եղեք ամուր և վճռական, բայց ոչ շատ ագրեսիվ:
- Առաջադրանքը կատարելիս վարվեք արհեստավարժ:
- Եղեք հոգատար ձեր մարմնի նկատմամբ:

## I. ԻՆՉՆ Է ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՏՈՒՄ

1. **Մենակությունը:** Միայնակ զինվորը կատարյալ գոհ է դիպուկահարի և դիվերսանտի համար:
2. **Կուտակումները:** Զինվորների կուտակումները մեկ վայրում կատարյալ խմբային թիրախ են խոշոր տրամաչափի զենքի համար:
3. **Տեղաբաշխվածությունը զինամթերքի պահեստի մոտ:** Կարող է պայթեցվել:
4. **Տեղաբաշխվածությունը կարևոր օբյեկտի մոտ:** Կարող էք տուժվել ռմբակոծվելիս:
5. **Բաց տարածությունը:** Հրետակոծության դեպքում թաքնվելու տեղ չկա:
6. **Դիրքիում դանդաղ հերթափոխը:** Հակառակորդը հաշվարկում է տեղադրությունը և նշանափորձում:
7. **Դանդաղ տեղաշարժումը:** Հակառակորդը կարող է արագ մոտենալ և գրոհել: Դանդաղ շարժվող տրանսպորտային միջոցին ավելի հեշտ է հարվածել կամ նռնակ նետել:
8. **Ուղղագիծ տեղաշարժը, տեղաշարժերի կանոնավորությունը:** Հակառակորդը կարող է նախատեսել ապագա տեղադրությունը և դարանակալել:

9. **Հիշի՛ր:** Մարտական գործողությունների գոտում ամենամեծ վտանգներն են. ականները, դիպուկահարները և ոչ պիտանի խմելու ջուր օգտագործելը:
- Ցանկացած ճանապարհ, որով հանգիստ քայլում էինք երեկ, այսօր կարող է ականապատվել կամ դիպուկահարի կողմից նշանառության տակ վերցվել:
- Ջրի ցանկացած աղբյուր կարող է թունավորված կամ վարակված լինել: Առավել հավանական է աղբյուրների թունավորումը լճացած, այլ ոչ թե հոսող ջրում:

## II. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԱՐՏ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԿԱՆՈՆ

### (Գործնական խորհուրդներ)

1. Մենյակ մտեք երկուսով՝ սկզբում նոնակը, հետո դուք:
2. Մոտենալով նույնիսկ ցանկացած շինության բաց դռներին՝ չմտնեք: Մի խնայեք նոնակները, հանեք ճուլկին և ներս գլորեք նոնակը: Պայթյունից 5 վայրկյան անց, առանց ճուլկին հեռացնելու, գլորեք երկրորդը և միանգամից մտեք: Նա, ով ողջ է մնացել առաջին նոնակի պայթյունից հետո, երկրորդը տեսնելով ընկնելու է հատակին և ձեռքերով պաշտպանելու է գլուխը՝ դուք նրան կարող եք գերել:
3. Դռան առջև կանգնելով և սպասելով գրոհին պատրաստվող ընկերներիդ, դուռն այպես պահեք, որ չբացվի: Հակառակ դեպքում միջանցքում կտեսնեք կամ նոնակ, կամ հրազենի փողը :
4. Նոնակները գլորեք, ոչ թե նետեք:
5. Մի վազեք ընկերոջ հրազենի փողի առջևից: Դուք խոչնդոտելու եք նրա կրակի վարման հնարավորությանը:
6. Ցանկացած փակ դուռ անձեռնմխելի է, քանի որ այն կարող է ականապատված լինել:
7. Արկղերը չբացել, էլեկտրոնիկան չմիացնել: Ոչնչի ձեռք չտալ: Ամեն բան կարող է ականապատված լինել: Դա այն աստիճան կարևոր է, որ դուք չեք կարող բացել սառնարանը, նույնիսկ եթե իսկապես շատ սոված եք, կամ պետքի համար ցանկանում եք բարձրացնել զուգարանի կափարիչը:
8. Չդիպչել դիակներին և տարբեր առարկաներին (ամեն ինչ կարող է ականապատված լինել):
9. Առաջին կրակոցից հետո «երևին մի տվեք» («маячить»), անմիջապես պառկեք:
10. Մի պահեք մատը ձգանիկի վրա (անզգույշ կրակոցից կարող են զոհվել ընկերները):
11. Մի վերցրեք փամփուշտները հակառակորդից առգրավված բաց ցինկից, նրանք կարող են վառողի փոխարեն լիցքավորված լինել տրոտիլով (պայթեցնելու է ավտոմատը, պոկելու է գլուխը):
12. Նոնակները կրել հատուկ պայուսակներում, բաց վիճակում չպահել (եղել են պատահական կառչելու դեպքեր):
13. Մի կրակեք նոնականետից հակառակորդի անձնակազմի վրա, եթե կրակոցի մարտական մասը կուսույթատիվ է (նախատեսված է միայն զրահատեխնիկայի համար և բեկոր գեթե չի տալիս ):
14. Ավտոմատի պահեստատուփերը ժապավենով մի զույգավորեք, մարտում մեկի անսարքության արդյունքում կզրկվեք երկուսից:

15. AK-74-ի պահպանակն ունի երեք դիրք. արգելափակված, ավտոմատ և մենահատ կրակի վիճակ: Եթե զինվորը խուճապի մեջ ավտոմատը կտրուկ հանում է պահպանակից, որպես կանոն, այն իջեցնում է մինչև վերջ, դրանով իսկ դնելով մենահատ կրակի ռեժիմ: Դա արվել է նրա համար, որ սարսափից խելագարված մարտիկը մեկ վայրկյանի ընթացքում չպարպի պահեստատուփի փամփուշտների ամբողջ քանակը: Հիշեք դա:
16. AK-ի պահպանակն իջեցնելիս բավականին տհաճ ձայն է ազդարարվում: Եթե ձեզ հարկավոր է այն անաղմուկ իջեցնել, սահուն քաշեք այն և դրեք ցանկալի կրակի ռեժիմում (սա գրեթե միշտ մենահատ կրակն է):
17. Ելքից առաջ տեղում ցատկեք: Ստուգեք, որ ոչինչ չի գրնգում և չի ծնգծնգում: Լավ է զենքի փոկակալները նախապես փաթաթել մեկուսիչ ժապավենով կամ բնտով: Փամփուշտը փամփշտակալում և ավտոմատը՝ պահպանակին:
18. Ուսումնասիրեք ձեր զենքի հրաձգության կանոնները: Գնդակը ուղիղ չի թռչում: Այն ունի բալիստիկ հետագիծ՝ վերազանցումով և նվազումով: Մինչև թիրախ ընկած հեռավորության գրագետ որոշումը և հրաձգության աղյուսակների իմացությունը հնարավորություն է ընձեռնում արագորեն խոցել թիրախը և, համապատասխանաբար, նվազեցնել ժամանակը, քանի դեռ հակառակորդը կրակում է ձեր ուղղությամբ:
19. Քամին ազդում է փամփուշտի հետագծի վրա: Նախապես ուսումնասիրեք քամու ազդեցությունը տվյալ զենքի վրա, այլ ոչ թե աչքաչափով կողմնորոշվիր:
20. Եթե ձեզ ընձեռնվել է զենք ընտրելու հնարավորություն, ապա ընտրեք ձեր ընկերների կողմից օգտագործվող նույն տեսակի (նույն տրամաչափի) զենք: Դուք չեք կարող շատ զինամթերք կրել ձեր վրա և, որպես կանոն, այն արագ կսպառվի, հատկապես քաղաքում, այնպես որ, եթե նրանք կարողանան ձեզ հետ կիսվել, դա մեծ պլյուս է: Եթե ձեր ընկերը գոհվի, վերցրեք նրա զինամթերքը՝ հրամանատարից թույլտվություն ստանալով:
21. Եթե դուք մեկնում եք ինքնուրույն գործողությունների, ապա կարող եք վերցնել 360 փամփուշտ կամ 12 պահեստատուփ, և նույնքան էլ բայց տուփերով տեղավորեք ուսապարկում:
22. **Հիշե՛ք**, որ կրծքավանդակի և որովայնի շրջանում տեղավորված պահեստատուփերը լրացուցիչ պաշտպանություն են:
23. Մահացու դեպքերի և վիրավորումների մեծամասնությունը բեկորներից է: Մովորական տաք բաճկոնը կարող է պաշտպանել ձեզ մանր բեկորներից: Հագնելով նաև պահեստատուփերով «ժիլետը»՝ կարող եք ձեզ համեմատաբար պաշտպանված համարել: Չմոռանաք բարձրացնել օձիքը:
24. Զրահաբաճկոնը շատ լավ բան է: Նույնիսկ մաշվածը:
25. Եթե գնդակը դիպչում է զրահաբաճկոնին, դա չի նշանակում, որ այն ձեզ փրկել է, քանի որ զրահի տարրերով կասեցված գնդակի էներգիան կարող է լուրջ վնասվածք պատճառել՝ հաճախ կտրվում են կողոսկրերը: Հնարավոր է նաև ներքին օրգանների պատռվածքներ և արյունահոսություն:
26. Ձեռք մի տվեք նոնականտերին: Դրանցով կրակելը դժվար է: Թողեք այն փորձառու ընկերներին:
27. Մի քանի օր մաքուր օդում անցկացնելուց հետո չծխողը ծխողին կարող է հայտնաբերել 70-100 մետր հեռավորության վրա: Հրաժարվեք ծխելուց:

28. Եթե ինչ-որ բան եք լսել, դադարեցրեք խմբի երթը և «լռություն» ազդանշանը տվեք: Ուշի-ուշով ունկնդրեք: Նույնիսկ եթե խումբը կանգնեցնեք յուրաքանչյուր հինգ րոպեն մեկ, միայն հազվագյուտ ապուշները ձեզ վրա կգայրանան:
29. Կանգ առնելով՝ սյունի կեցվածք մի ընդունիր: Պետք է ծնկի գալ կամ պառկել: Դա շատ հյուծիչ է, բայց դա է ամբողջ խմբի գոյատևման գրավականը: Եթե ինչ-որ մեկը ծուլանում է նստել, ստիպողաբար նստեցրեք:
30. Մատը չպետք է լինի ձգանիկի վրա, նույնիսկ եթե զենքը պահպանակի վրա է:
31. Երթի ժամանակ ավտոմատը գտնվում ձեռքերին՝ խաչաձև կրծքին սեղմած: Այսպես ավելի հեշտ է տանելը: Միննույն ժամանակ, աջ (կամ ձախ) ձեռքի մատը միշտ պատրաստ է զենքը հանել պահպանակից և բավականին արագ մարտական դիրքի բերել:
32. Ավտոմատի փոկը միշտ պարանոցին է: Հակառակ դեպքում, եթե ընկնես դարան կամ պայթյուն տեղի ունենա, ապա դու կթոչես մի ուղղությամբ, իսկ զենքը՝ մյուս:
33. Պահակակետում՝ արթուն լինել: Եթե քնեք, ձեզ գնդակահար կցանկանա ոչ միայն թշնամին:
34. Միզել կարող եք ծնկած վիճակում՝ չվերածվելով կանգնած թիրախի: Զուգարանը լուրջ է: Երթի ժամանակ զուգարան գնացեք երեքով: Մեկը հոգում է իր կարիքները, երկուսը՝ 180 աստիճան տրամագծով հսկում են:
35. Փոշտացեք (հագացեք) ներքուստ:
36. Նա, ով դանդաղ է վազում, արագ էլ զոհվում է:
37. Նռանակի արդյունավետությունը գերազնահատված է: Եղել են դեպքեր, երբ նռնակը պայթել է փոքր սենյակում, բայց պատճառվել է միայն թեթև ցնցում:
38. Նռանակի օղակը ատամներով չի կարելի պոկել: Միայն մատներով:
39. Պատերին կարող են լինել լաթերով կամ գորգերով քողարկված անցումներ, որոնք հակառակորդը կարող է օգտագործել սենյակից սենյակ արագ տեղաշարժվելու համար: Հիշե՛ք դա: Այն որ, դուք գտնվում եք անկյունային սենյակում, դեռ չի նշանակում, որ հարևան սենյակից ձեր մոտ չեն կարող մուտք գործել թշնամիները:
40. Պատուհանների կարելի է կախել հին խորհրդային մահճակալների ցանցերը: Նրանք լավ են կասեցնում կրակը:
41. Դուք կարող եք լսել մլավոց, օրինակ, պահարանի դռան հետևից: Ափսոս, բայց կենդանին դատապարտված է: Ամենայն հավանականությամբ, նրան այնտեղ փակել են նռնակի հետ միասին: Չի կարելի բացել:
42. Եթե ձեզ հարկավոր է կրակել սենյակից դեպի փողոց, ապա ձեզ հարկավոր չէ սողալ դեպի պատուհանագոգը կամ կանգնել պատուհանի կողքին: Հեռացեք սենյակի խորքը, պատապարվելով պատի ետևում՝ կանգնեք արթռակի վրա, առանց լույսը միացնելու և այլն:
43. Աղյուսի կամ բետոնի բեկորները հակված են թոչել ձեր ուղղությամբ: Մարտավարական ակնոցներ կրելով կարող եք պաշտպանել ձեր աչքերը մանր բեկորների ներթափանցումից:
44. Երկար ժամանակ կրակելով առանց դիրքը փոխելու՝ դատապարտված եք մահվան:

45. Կոացեք: Տեղաշարժվեք հերթականությամբ կարճ վազելագրով: Որպեսզի հակառակորդը նշանառու կրակով խոցի շարժվող թիրախը նրան հարկավոր է առնվազն երկու վայրկյան ժամանակ, և եթե յուրաքանչյուր վազելագր տևում է ընդամենը մի քանի վայրկյան, ապա հակառակորդը չի հասցնի վազող մարդուն ճշգրիտ նշանառել, քանի որ նա արդեն թաքնվել է և պատրաստվում է հաջորդ քայլը կատարելու:  
Անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ կանոնով: Պառկել - սողալ, քանի որ հակառակորդը նկատում է տեսանելի թիրախի անհետացման վայրը և առաջին հերթին գնդակոծում այն կամ նշանառում ու սպասում է:
46. «Դիպուկահարին բացահայտելու» կարիք չկա: Դա ձեր գործը չէ, դուք չունեք բավարար գիտելիքներ: Շարունակեք մարտնչել, առանց ուշադրություն դարձնելու:
47. Եթե այլ այլընտրանք չկա, վազելուց առաջ նախ ընտրեք հաջորդ դիրքը:
48. AK-74-ի վրա կարող եք տեղադրել ՇԲԴ-ի ՈՇՕ նշանոցը: 500-600 մետր հեռավորության վրա AK-74-ը և ՇԲԴ-ի գնդակների թռիչքի հետագծերը գրեթե նունն են: Կրակել և կրակն արագ տեղափոխել AK-74-ով ավելի դյուրին է, քան ՇԲԴ-ով:
49. Ժամանակակից ՔՂՕ և ՔԴԿ ձեռքի բեկորային նռնակները պայթում են առաջին հերթին հարվածից: Նրանք ունեն հարվածային պայթուցիչ, իսկ միջնակա պայթյունը տեղի է ունենում, երբ գործում է ինքնառնչացման սարքը (օրինակ, այն դեպքերում, երբ նռնակն ընկել է փխրուն ձյան մեջ):
50. Ոչ ոք, նույնիսկ սակրավորները, չեն զբաղվում սկանների և պայթուցիկ սարքերի հեռացմամբ: Նրանք պարզապես պայթեցնում են այդպիսիք՝ տրոտիլային գլանակի միջոցով: Պետք չէ իմաստակել:
51. Հնուտ մարտիկները «առձգիչների» («растяжка») լարին գաղտնափական են դնում, որպեսզի պարզագույն ձևով հնարավոր չլինի վնասագրեծել այն: Այնպես որ, «լարը կտրելը» վատ գաղափար է: Պարզապես շրջանցեք: Դա ձեր գործը չէ, դրա համար կան ավագ ընկերներ:
52. Վիրավորվելիս կարող է երակային և զարկերակային արյունահոսություն սկսվել: Նրանց «բուժման» եղանակները տարբեր են: Բայց այստեղ մեկ այլ բան է կարևոր: Մարտի թեժ պահին ժամանակ չկա: Երակային արյունահոսությամբ ընկերը կմահանա մի քանի ժամվա ընթացքում, իսկ զարկերակայինի դեպքում բառացիորեն 10-20 վայրկյանի ընթացքում: Հետևաբար, արյունահոսությունը դադարեցնելու համար մատով սեղմեք վիրավորի զարկերակը վերքի վերին մասից և կիրառեք լարան: Ինքներդ անմիջապես վերադարձեք ձեր խնդիրները կատարելուն: Ձեր ընկերը հետագա անելիքները պարզելու համար կունենա կես ժամից - մեկ ժամ ժամանակ, կամ էլ դա կանեք դուք, երբ վերադառնաք:
53. Լարանը (տուրնիկետը) միշտ պետք է լինի հասանելի:
54. Ձեզ հետ միշտ ունեցեք երկու լարան: Մեկը կարող եք տալ վիրավոր ընկերոջը և մեկ թույլ անց ինքներդ ազդրային զարկերակի վիրավորում ստանալ:
55. Կա այսպիսի հասկացություն «կրակով ճնշել»: Ակտիվորեն կրակելով թշնամուն ուղղությամբ կարող եք խափանել նրա գործողությունները՝ առանց նույնիսկ վնասելու կենդանի ուժին: Հատկապես այս հարցում կօգնեն լուսածրող գնդակները:

56. **Հիշե՛ք**, լուսածրող գնդակները, ոչ միայն սաստիկ աղտոտում են զենքը, այլև կարող են բացահայտել նաև ձեր տեղը: Այնպես որ, չչարաշահեք այդպիսի գնդակներով կրակի վարումը: Բացի այդ լուսածրող գնդակներով նշանառու կրակ վարել բարդ է:
57. Զենքը պետք է մաքրել ամեն օր: Հատկապես ուշադիր եղեք փողաբերանի արգելակի շրջանում: Եթե այնտեղ կա ակոս կամ փոսիկ, ապա խիտ հրաձգության ճշգրտությունը մեծապես նվազում է:
58. Պահեստատուփի վերջին երեք փամփուշտները ցանկալի է լիցքավորել լուսածրող փամփուշտներով, որպեսզի դատարկ պահեստատուփը ձեզ անակնկալի չբերի: Ավելին, եթե փողում մեկ փամփուշտ եք թողնում, ապա նոր պահեստատուփը տեղադրելով, կարիք չկա զենքը կրկին լիքավորելու, այսինքն՝ բարձրանում է լիցքավորման արագությունը:
59. Հետևեք ձեր ոտքերին, մի ծուլացեք լվանալ դրանք: Հարված որքերով զինվորը այլևս մարտիկ չէ:
60. Եթե տեսնում եք, որ ինչ-որ մեկին կարող եք կրակելով խոցել, դա դեռևս կրակ բացելու պատճառ չէ: Եթե ձեզ չեն նկատել, հրամանատարից հարցրեք՝ կարող եք մարտի մեջ մտնել, թե ոչ:
61. Եթե ինչ-որ մեկին նկատել եք, բայց նրանք ձեզ չեն նկատել, պետք չէ կտրուկ ցատկել մի կողմ: Ծայրամասային տեսողությունը ձեզ ակնթարթորեն կբացահայտի: Նրբորեն և սահուն, առանց շտապելու, նստեք և հանգիստ զբաղեցրեք դիրքը: Դա շատ ավելի քիչ նկատելի կլինի:
62. **Հիշե՛ք**, որ փամփուշտը փամփշտակալ ուղարկելով, փակադակը պետք է կտրուկ բաց թողնել, որպեսզի այն շոնդա: Հակառակ դեպքում՝ «կծամի» փամփուշտները:
63. Հակառակորդի կրակի տակ տեղից տեղ շարժվելը վտանգավոր զբաղմունք է, այն մեծ վարպետություն է պահանջում, բայց միշտ պետք է պատրաստ լինել ցանկացած վտանգի:
64. Դուք պետք է շարժվեք փողոցների երկայնքով կամ շենքերի միջով՝ օգտագործելով պատերում առաջացած ճեղքվածքները: Եթե դուք ստիպված եք տեղաշարժվել բաց տարածքում, օգտագործեք ծխածածկույթը: Մնացեք պատերին հնարավորինս մոտ:
65. Երբեք մի հատեք բաց տարածքը ուղիղ: Միշտ փնտրեք լուծում, նույնիսկ եթե դա երկար է: Եթե դուք ստիպված եք քայլել բաց տարածքով, քայլե՛ք արագ: Եթե ամբողջ խումբն է շարժվում, մի հատեք բաց տարածքը մեկ առ մեկ: Վազեք խմբով՝ օգտագործելով ծխածածկույթն ու պաշտպանիչ կրակի վարումը: Այս տեխնիկան նվազագույնի է հասցնում ռիսկերը:
66. Երբ դուք ստիպված եք հատել ծառուղիները, ցրվեք միմյանցից 3-5 մ հեռավորությամբ և միաժամանակ վազեք հրամանատարի ազդանշանով:
67. Եթե զբաղեցրել եք դիրքը, պատրաստ եղեք կրակով պաշտպանել ձեր ընկերներին:
68. Նկուղի պատուհաններն անվտանգ չեն: Ցատկեք նրանց վրայով:
69. Դռների բացվածքներից չօգտվել: Նրանք չափազանց վտանգավոր են:
70. Ոչ մի դիրք չփորձեք թողնել առանց ձեր ընկերների պաշտպանության ապահովման: Վստահ եղեք, որ այն դիրքը, որին պետք է հասնեք, ձեզ կապահովի ձեր ընկերոջ հետագա կրակային պաշտպանությունը:

71. Կանգնած դիրքով անկյունից նայելը վտանգավոր է: Դա ավելի լավ է անել պառկած վիճակում:
72. Պատը հաղթահարելիս փորձեք դա անել՝ բարձրանալով դրանից բարձր: Եթե վստահ չեք, որ մյուս կողմը անվտանգ է, նետեք նոնակ:
73. Զգուշություն ցուցաբերեք, երբ անցնում եք առաջին հարկի պատուհանների տակով: Գլուխներդ պահեք պատուհանից ցած:
74. Եղեք պատրաստ կրակել ցանկացած ուսից: Մի կրակեք թաքստոցի վերևից: Կրակեք կողքից, հակառակ դեպքում ձեր ուրվագիծը տեսանելի կլինի և կդառնա հարմար թիրախ:
75. Կանգնած դիրքով անկյունից կրակելը վտանգավոր է: Ձեր ամբողջ մարմինը կլինի թշնամու կրակի տակ: Ծնկած կրակելը լավ է, բայց պառկած ավելի լավ է:
76. Շենքի ենթադրյալ ներթափանցման վայրին մոտենալիս, կարող ես արագ այնտեղ արագ մտնել միայն ընկերներիդ օգնությամբ: Շենքը մաքրելիս, նախքան ներս մտնելը, նոնակ նետեք: Լավ գաղափար է հաշվել նոնակի դանդաղեցուցիչի ժամանակը, որպեսզի այն հետ չստանաք: Դա անելիս մի մոռացեք, որ նոնակը կարող է վաղաժամ պայթել:
77. Դուք կարող եք օգտագործել ԴՄ-25 ենթափողային նոնականետ, այն կարող է «ուղարկել» նոնակը շատ ավելի հեռու և ճշգրիտ, քան ձեռքի ուժով նետածը:
78. Նոնակը նետելուց հետո պետք է արագ թափանցել պատուհանից կամ պատի ճեղքվածքից ներս:
79. Եթե պատուհանը ձեր գլխից չափազանց բարձր է, դիմեք ընկերների օգնությանը: Եթե հնարավոր է, ապա օգտագործեք ՔՄԳ-ն՝ այն ի վիճակի է ոչ միայն անցքեր բացել, այլև ոչնչացնել պատի հետևում թաքնված հակառակորդին:
80. Գտնվելով շենքի ներսում կարող եք բախվել երկու խնդրի: Դուք կարող եք հայտնվել հակառակորդի կրակի տակ թե դրսից, թե ներսից: Երբեք մի կանգնեք պատուհանների դիմաց, դռների բացվածքներում կամ պատերի անցքերի դիմաց: Եթե այդպիսիք հանդիպում են, սողացեք նրանց տակով:
81. Շենքի ներսում վտանգավոր են սրահն ու միջանցքները: Եթե ձեզ հարկավոր է հաղթահարել դրանք, գտնվեք պատերին մոտ:
82. Ներքին միջնորմներով շենքերը կարող են հաղթահարվել ՈՒՄ գնդացիի կրակի միջոցով՝ ծակելով պատերին:
83. Շենքերի մաքրումը պահանջում է թիմային ներդաշնակ գործողություններ: Օգտագործեք նոնակների ու պայթուցիկների բոլոր հնարավորությունները: **Հիշե՛ք**, որ կրակելով միջնորմ պատերին, կարող եք պատասխան կրակ ստանալ հակառակորդից:
84. Ստորաբաժանումների հետ տեսողական կապ հաստատելու և պահպանությունը կազմակերպելու համար առանձնացրեք ուժերի մի մասը:
85. Երբ շենքը գրավված է, դրա բոլոր մատույցները պետք է գտնվեն պահպանության տակ: Հատուկ ուշադրություն դարձրեք տանիքներին և ստորգետնյա հաղորդակցության ողիներին:
86. «Մաքրման» գործողությունները ավարտելուց հետո անհրաժեշտ է.
  - համալրել զինամթերքը,
  - նշել շենքը որպես «մշակված»,



- հաջորդ շենքերում «մաքրման» աշխատանքներ իրականացնող ուժերին աջակցել պաշտպանիչ կրակով,
  - տարհանել վիրավորներին,
  - եթե շենքը պետք է զբաղեցվի, ապա անհրաժեշտ է կազմակերպել դրա պաշտպանությունը:
87. Մարտիկը միշտ պետք է փնտրի այնպիսի դիրք, որը կտրամադրի քողարկում և կրակի վարման լայն հատված:
  88. Պատերին առաջացած ճեղքվածքներն ու պատուհանները պետք է ամրացվեն ավազի պարկերով: Քողարկումը ապահովելու համար անհրաժեշտ է պատերի մեջ բացել անկանոն ձևի անցքեր:
  89. Հեռացրեք բոլոր ապակիները պատուհաններից, թողեք միայն վարագույրները (եթե դրանք կան): Երբ կրակը վարվում է վերին հարկերից, օգտագործեք սեղանի վրա դրված պարկեր:
  90. Հատակները (երկրորդ հարկից սկսած) նույնպես պետք է ամրացվեն ավազե պարկերով:
  91. Դուք կարող եք կառուցել անհատական թաքստոց՝ օգտագործելով սեղանը, որի վրա դրված են պարկերը: Հետևեք քողարկման կանոններին: Հակառակորդին մոլորեցնելու համար տեղակայեք կեղծ կրակակետեր:
  92. Տանիքում տեակայված հակատանկային միջոցների դիրքերը թույլ են տալիս ավելի լայն հատվածով խոցել հակառակորդի տանկերը: Բացի այդ, տանկերին դժվար է հարվածել տանիքի դիրքերին, քանի որ տանկի փողի բարձրացման անկյունն ունի սահմանափակումներ:
  93. ՔՄԲ-ն պետք է տեղադրել այնպես, որ ռեակտիվ շիթը հետևի պատուհաններից դուրս գալու հնարավորություն ունենա:
  94. Ամենատարածված սխալը պատուհանագոգից կրակ վարելն է: Դա տեղի է ունենում հրաձգության հատվածը ընդլայնելու ցանկության պատճառով: Բայց դուք չեք կարող միանգամից կրակել բոլորին: Դիրքավորվեք սենյակի խորքում: Պատուհանագոգից մինչև սեղանի եզր ընկած հեռավորությունը պետք է լինի 1-2 մետր:
  95. Տանիքի դիրքերը շատ օգտակար են: Դրանք կրակելու համար հիանալի հատված են ապահովում և հակառակորդին առավելություն չեն տալիս ներքևից վերև կրակելու:
  96. Եթե խումբը գրավում է սենյակը, հարկավոր է բաշխել պատասխանատվության գոտիները՝ ըստ նախնական պայմանավորվածության կամ վարժանքներում մշակված սովորական կանոնների: Եթե սենյակ ներխուժող առաջինը շարժվում է ուղիղ, ապա երկրորդը շարժվում է աջ, երրորդը դեպի ձախ, վերջինը պաշտպանում է թիկունքը: Չմոռանաք, որ հակառակորդը կարող է հայտնվել ձեր թիկունքում:
  97. Եթե ինչ-որ մեկը զենքը փորձում է ուղղել ձեզ վրա, անմիջապես գրոհեք, քանի դեռ իրադրությունում նա չի կողմնորոշվել:
  98. Մարտում հակառակորդը ձգտում է խոցել առաջին հերթին այն զինվորներին, ովքեր ունեն ամենաարդյունավետ զենքը (գնդացիք, նոնականետ և այլն) և զբաղեցնում են իր համար ամենավտանգավոր դիրքերը, ինչպես նաև կապավորներին ու սպաներին: Այդ պատճառով կրտսեր սպաները (դասակի հրամանատարները) ավելի հաճախ են զոհվում, քան զինվորները: Նորակոչիկների զոհվելու հավանականությունը

հինգապատիկ ավել է, քան մարտերում թրծված զինվորների միջավայրում, ուստի ամենակարևորը առաջին մարտում գոյատևելն է:

99. Նահանջող հակառակորդը կարող է ճանապարհները ականապատել ական-թակարդներով, օրինակ՝ ականապատել հատուկ թողած «ռազմավարը», դիակները և այլն:
100. Բնակավայրը գրավելուց հետո գորքերի հիմնական մասը պետք է անմիջապես լքի այն, քանի որ հակառակորդի ավիացիայի և հրետանու համար հարմար թիրախ է:

### **III. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

#### **3.1. Գործողություններ հրետակոծության և ավիացիայի ուժերի ժամանակ**

Մարտական գործողություններում հոգեկանի համար ամենադժվարը զանգվածային հրետակոծության կամ ավիացիայի ուժերի ժամանակ տակ ընկնելն է: Եթե սկսվել է ստորաբաժանման հրետակոծումը, առաջին հերթին հարկավոր է տարակենտրոնացվել:

Եթե մեկ թնդանոթի մի քանի արկ պայթում է դիրքի տարբեր կողմերում, ապա հնարավոր է, որ իրականացվում է նշանափործում, կամ կրակելիս առկա է ցրվածություն, այսինքն՝ հաջորդ արկը, ամենայն հավանականությամբ, կխոցի ձեռք դիրքը:

Հրետակոծության ժամանակ հարկավոր է ականջները ծածկել ափերով, իսկ բերանը բաց պահել՝ ականջի թմբկաթաղանթները պահպանելու համար:

Եթե դուք գտնվում եք սենյակում և սկսվել է հրետակոծությունը, խորհուրդ է տրվում անջատել լույսերը և պառկել հատակին: Լավագույնն այն է, որ թաքնվեք ներքին տարածքում, օրինակ՝ լոգարանում: Երբ դա հնարավոր չէ, պետք է ոչ միայն պառկեք, այլև պաշտպանեք ձեզ այնպիսի առարկաներով, որոնք կարող են պաշտպանել բեկորներից:

Եթե հակառակորդի հրետակոծության ժամանակ գտնվում եք փողոցում, ապա պետք չէ փորձել թաքնվել մեքենաների կամ կրակակների հետևում, քանի որ նրանք են առաջին հերթին խոցվում: Մեքենաները բեկորների համար շատ թույլ խոչընդոտ են և ունեն նաև գազի բալոններ, բենզաբաքեր, որոնք կարող են պայթել: Թաքստոցներ (ապաստարաններ) արագ հասնելու հնարավորության բացակայության դեպքում խորհուրդ է տրվում պարզապես պառկել և չշարժվել:

Քանի դեռ հակառակորդի հրետանու կրակը չի դադարել, մի շտապեք վիրավորներին օգնության հասնել, որքան էլ նրանք բարձրաձայն բղավեն, քանի որ դուք ինքներդ կարող եք թիրախ դառնալ:

Համազարկային կրակի ռեակտիվ համակարգերը չեն տարբերվում մեծ ճշգրտությամբ և ծածկում են ընդարձակ տարածք: Այստեղ օրինաչափությունները շատ քիչ հավանական են, և կարևորն այն է, որ վերապրեք համազարկը, որը տևում է մի քանի վայրկյանից մինչև մի քանի տասնյակ վայրկյան: Հրետակոծության հետագա դադարի ժամանակ հնարավորություն է ընձեռնվելու վերատեղաբաշխվելու կամ ավելի լավ թաքնվելու համար:

Հրետանային կրակը հաճախ թույլ չի տալիս երկար ժամանակ գլուխը բարձրացնել, սակայն այն բնութագրվում է մշտական կարգավորմամբ: Այս դեպքում

«արկը երկու անգամ չի հարվածում նույն ձագարին» կանոնը ճշմարտություն է: Բացի այդ, ձագարները միշտ հիանալի թաքստոցներ են:

Օդային հարվածները սովորաբար կարճատև են, բայց հզոր: Այս իրավիճակում կարևոր է արագ կողմնորոշվել, թե իրականում որն է հակառակորդի ավիացիայի հարձակման նպատակը և գործել դրանից ելնելով:

### **3.2. Գործողություններ ականանետային գնդակոծման ժամանակ**

1. Լսեք թռչող ականաների ձայները, սովորեք տարբերակել և վերլուծել դրանք:
2. Ականակոծման դեպքում անմիջապես պառկեք և սեղմվեք գետնին կամ զբաղեցրեք թաքստոցները (բլինդաժ, վրածածկ ճեղք (перекрытая щель)): Սովորեք դա անել, նախքան ականաների ընկնելը՝ դա ձեր շահերից է բխում:
3. Ինչ էլ որ պատահի, ոչ մի դեպքում չի կարելի վեր կենալ և առավել ևս կանգնել: Մի փորձեք փախչել ականակոծման գոտուց՝ միևնույն է ականաներն ու բեկորները ավելի արագ են: Սպասեք, մինչև հնչի, օրինակ, 8-10 պայթյուն, ապա սպասեք առնվազն երեք րոպե, որից հետո արագ փոխեք դիրքս և տեղափոխվեք թաքստոց: Եթե նույնիսկ մոտակայքում ինչ-որ մեկը օգնության կարիք ունի, ցույց տվեք այն գնդակոծությունից հետո կամ թաքստոցում, հակառակ դեպքում, ամենայն հավանականությամբ, շուտով ձեզ նույնպես այդպիսի օգնություն պետք կգա:
4. Օգտագործեք արհեստական և բնական թաքստոցներն ու տեղանքի ծալքերը:
5. Եթե գտնվում եք մի տարածքում, որտեղ հնարավոր է ականակոծություն, մի հանեք զրահաբաճկոնն ու սաղավարտը: Պաշտպանության երրորդ կամ չորրորդ դասի զրահաբաճկոնները բավականին հուսալիորեն կասեցնում են ականանետի բեկորները: Նույնիսկ երկրորդ կարգի հասարակ զրահաբաճկոնը և հին խորհրդային մոդելի սաղավարտը ավելորդ չեն լինի:
6. Մի ամաչեք մարզվել և նախապես պատրաստվեք ականանետային ականակոծումից պաշտպանվելու հնարքների կիրառմանը:

### **3.3. Գործողություններ ՀԶԿՌՀ-ների հրետակոծման ժամանակ**

1. Անհնար է լսել, քանի որ արկը թռչում է գերձայնային արագությամբ: Կազմակերպեք մշտական դիտարկում:
2. Մշտապես տեսադաշտում պահիր շրջակա շենքերը, շինությունները, առարկաները, որոնք կարելի է արագ օգտագործել որպես թաքստոց: Ժամանակի ընթացքում դա սովորություն կդառնա:
3. Խրամատները, ձագարները, ճեղքերը բավականին հուսալիորեն պաշտպանում են բեկորներից: Եթե հրետակոծումը սկսվել է, երբ դուք գտնվում եք բաց տարածքում, ապա պառկեք գետնին:
4. Շենքում ավելի լավ է թաքնվել նկուղում կամ առաջին հարկում՝ անկյունում, պատուհանի կամ դռան մոտ:
5. Համազարկն ավարտելուց հետո մի շտապեք դուրս գալ թաքստոցից: Սպասեք առնվազն տասը րոպե, հավանական է, որ հրետակոծությունը շարունակվի:

### **3.4. Գործողություններ ավիացիոն հրոսման (авиационный налет) ժամանակ**

Ավիացիոն հրոսման ժամանակ շատ կարևոր է խուճապի չմատնվել, չվազել: Գործողության կարգը.

1. Եթե դուք գտնվում եք բաց տարածքում, պառկեք և մի նայեք վերև:
2. Սողացք դեպի թաքստոց, եթե այն մոտ է:

3. Մի վազեք՝ շարժումն անպայման ուշադրություն գրավում:
4. Ուղղաթիռը նախ շրջադարձ է կատարում, ապա կրակ բացում:

Եթե դուք գտնվում եք ավիացիոն հրոսման տակ, կատարեք հետևյալը.

- կրակեք առկա բոլոր զենքերից,
- փորձեք անմիջապես ինքնաթիռի (ուղղաթիռի) թռիչքի ուղղությամբ ստեղծել խափանիչ կրակի գոտի,
- որպես թաքստոց զբաղեցրեք ձագարները կամ թաքնվեք ծառի հետևում,
- չկուտակվել, վերատեղաբաշխվել,
- եթե պետք է վազել կամ մեքենայով մեկնել, մի վազեք և մի շարժվեք ինքնաթիռի (ուղղաթիռի) թռիչքի ուղղությամբ: Շարժվեք անկյան տակ:

### **3.5. Գործողություններ, երբ դարանակալման մեջ եք ընկել**

Ստորաբաժանման հետիոտն տեղաշարժման դեպքում կատարել հետևյալ գործողությունները:

1. Այն զինձառայողների ուղղությամբ որոնց նկատմամբ հակառակորդը սկսել է կրակել, անմիջապես պատասխան կրակ են բացում, թաքստոցներ փնտրում և ոչնչացնում թշնամու դիրքերը:
2. Այն զինվորները, որոնց ուղղությամբ կրակ չի իրականացվել, հակառակորդին ոչնչացնելու նպատակով գաղտնի շրջանցում են թևերից և թիկունքից:
3. Խոցման գոտում գտնվող զինձառայողները դիմադրում են այքան ժամանակ, մինչև երկրորդ խումբը թևերից և թիկունքից կշրջանցել հակառակորդին:
4. Ստորաբաժանման հրամանատարը զեկուցում է հրամանատարության շտաբին:

Տրանսպորտային միջոցներով ստորաբաժանման տեղաշարժման դեպքում կատարել հետևյալ գործողությունները:

1. Տրանսպորտային միջոցներում գտնվող գնդացրորդներն ու անձնակազմը անմիջապես պատասխան կրակ են բացում:
2. Եթե ճանապարհը մաքուր է, վտանգավոր տարածքով բոլոր մեքենաները շարունակում են շարժվել առավելագույն արագությամբ:
3. Առաջին տրանսպորտային միջոցում գտնվող զինձառայողները ծխային նոնակներ են կիրառում թշնամու տեսադաշտը սահմանափակելու նպատակով:
4. Վնասված տրանսպորտային միջոցների զինձառայողները լքում են այն, ապահովում դրա պահպանությունը և կրակ են վարում հակառակորդի ուղղությամբ:
5. Ստորաբաժանման մնացած անձնակազմը հետևում է հիմնական տրանսպորտային միջոցին, որը հակառակորդին ոչնչացնելու նպատակով առաջանում է դեպի թևեր կամ թիկունք:
6. Ստորաբաժանման հրամանատարը զեկուցում է շտաբին: Նշված գործողությունները կատարելուց հետո անհրաժեշտ է անհապաղ ապահովել անհետաձգելի բժշկական օգնություն և տարհանել վիրավորներին:

### **3.6. Պաշտպանություն դիպուկահարներից**

Դիպուկահարը ոչ այնքան ճշգրիտ հրաձիգ է, որքան միայնակ որսորդ, ով կարող է շատ երկար և անշարժ սպասել դարանում: Դիպուկահարի թիրախ կարող էր դառնալ ոչ միայն առաջնագծում, այլև թիկունքում:

Որպեսզի դա տեղի չունենա, պետք է խուսափել բաց տարածություններից, իսկ եթե դրանք շրջանցելու հնարավորություն չկա, շարժվել արագ և առանց կանգ առնելու: Թաքստոցներից դուրս չպետք է մնաք մեկ տեղում (կանգնեք, նստեք), քանի որ դիպուկահարները նախընտրում են անշարժ թիրախներ:

Եթե դիպուկահարի նշանատության տակ է որմնախոռոչը կամ բրուսավերը, որի միջով ինչ-որ մեկը կարող է նայել, նա կարող է խոցել թիրախը, նույնիսկ եթե այդ խոռոչից գլուխը միայն մեկ վայրկյան է երևացել:

Դիպուկահարները լավ պատրաստված են խոցելու նրանց, ովքեր մոտենում են վիրավորներին: Նրանք կարող են դիտավորյալ թիրախավորել առաջին զոհի ոտքը, որպեսզի վիրավորը երկար ժամանակ կենդանի մնա և օգնություն կանչի:

Ստորաբաժանումը դիպուկահար կրակից պաշտպանելու համար անհրաժեշտ է.

1. դիրքերը զբաղեցնելուց անմիջապես հետո կազմակերպել դրանց շուրջ տեղանքի շարունակական դիտարկման համակարգ,
2. կահավորել դիրքերը և հաստատել կենսագործունեության այնպիսի կարգ, որը պետք է ունենա հակադիպուկահարային ուղղվածություն,
3. իրականացնել դիտարկում և արձանագրել հակառակորդի դիպուկահարների ակտիվությունը,
4. ղեկավարության միջոցով հրավիրել հակառակորդի դիպուկահարների դեմ պայքարի ստորաբաժանում,
5. հնարավորության դեպքում ոչնչացնել հայտնաբերված դիպուկահարին գերձշտգրիտ միջոցներով:


## IV. ԱԿԱՆԱՅԻՆ ՎՏԱՆԳ

### 4.1. Պայթուցիկ սարքերի արտաքին տեսքը

**Հիշե՛ք**, թե ինչպիսին է վտանգը:

Ականները անտեսանելի մահացու վտանգ են:

Եթե տեսնում եք նման մի բան, մի մոտեցեք և մի դիպչեք:



#### 4.2. Ինքնաշեն պայթուցիկ սարքեր

Ինքնաշեն պայթուցիկ սարքերի նշաններն են.

- հայտնաբերված առարկայի վրա մեկուսիչ ժապավենի առկայությունը,
- հայտնաբերված առարկայի վրա լարերի, էլեկտրամատակարարման տարրերի, ռադիոալեհավաքների, ժամացույցի մեխանիզմի առկայությունը,
- կասկածելի ձայները՝ ճռճոց, կտկտոց, տկտկոց, էլեկտրական, LED լամպերի թարթում և այլն,
- առարկայից բուրող հոտը (օրինակ՝ նուշի կամ բենզինի):

Ուշադիր եղեք:

Առարկան կարող է ունենալ ցանկացած տեսք՝ պայուսակի, փաթեթի, կապոցի և այլն: Կասկածելի առարկայի հայտնաբերման մասին անմիջապես իրազեկեք համապատասխան մարմիններին: Ի դեպ արգելվում է գտնվելով գտածոյի կողքին օգտագործել բջջային հեռախոսը:



#### 4.3. Առավել հավանական վտանգ ներկայացնող վայրեր



Չզված լարեր



Անմշակ հող



Ռազմական զինամթերքի իրեր



Նախկին ամրաշինական կառույցներ



Կենդանիների մնացորդներ



Վնասված ռազմական տեխնիկա

4.4. Պայթուցիկ առարկաների հայտնաբերման դեպքում, խստիվ արգելվում է վերցնել դրանք, փորել-հանել գետնից, հարվածել դրանց, ինքնուրույն ապամոնտաժել, տեղաշարժել, տեղափոխել դրանք տեղից-տեղ, կրակ վառել դրանց կողքին:

4.5. Նշաններ, որոնք նախազգուշացնում են պայթուցիկ սարքերի առկայության մասին

Հիշե՛ք, թե ինչպիսի տեսք ունեն նախազգուշակա նշանները:

Խստիվ արգելվում է թափանցել նախազգուշակա նշաններից ներս:

Նախազգուշակա նշանները երբեք մի վերցրեք ձեզ հետ, դրանք հուշանվերներ չեն:

*Սղթյուրը: [Территориальная оборона](#)*